



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻՂՐՈՑԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ**

« 04 » 04 2022թ.

№ 08/ԼԱ/ - 249

**ՏԵՂԵԿԱՆՔ**

ՀՀ-ում 2022թ. մարտի 28-ից ապրիլի 3-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Ողջ շաբաթվա ընթացքում հանրապետությունում դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը մարտի 28-29-ին ցածր է եղել նորմայից 1-4 աստիճանով, 30-ին եղել է նորմայի սահմաններում, մարտի 31-ին, ապրիլի 1-2-ին բարձր է եղել 2-4 աստիճանով, 3-ին բարձր 4-8 աստիճանով (Տավուշում, Սյրունիքում՝ 8-14) աստիճանով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքում՝ հովիտներում՝  $+31...+33^{\circ}\text{C}$ , նախալեռներում՝  $+21...+24^{\circ}\text{C}$ , Արմավիրում, Արարատում՝  $+27...+30^{\circ}\text{C}$ , Տավուշում՝  $+25...+29^{\circ}\text{C}$ , Վայոց ձորի նախալեռներում՝  $+27^{\circ}\text{C}$ , լեռներում՝  $+16^{\circ}\text{C}$ , Արագածոտնի նախալեռներում՝  $+20...+26^{\circ}\text{C}$ , լեռներում՝  $+12...+13^{\circ}\text{C}$ , Լոռիում՝  $+18...+24^{\circ}\text{C}$ , Կոտայքի նախալեռներում՝  $+23^{\circ}\text{C}$ , լեռներում՝  $+17...+18^{\circ}\text{C}$ , Շիրակում՝  $+12...+18^{\circ}\text{C}$  (Գյումրի՝  $+20^{\circ}\text{C}$ ), Գեղարքունիքում՝  $+12...+19^{\circ}\text{C}$ , Երևանում՝  $+25...+26^{\circ}\text{C}$ :

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Արագածոտնի լեռներում՝  $-6...-12^{\circ}\text{C}$ , նախալեռներում՝  $-2...-5^{\circ}\text{C}$ , Վայոց ձորի լեռներում՝  $-11^{\circ}\text{C}$ , նախալեռներում՝  $-2^{\circ}\text{C}$ , Շիրակում, Գեղարքունիքում՝  $-5...-10^{\circ}\text{C}$  (Աշոցք՝  $-16^{\circ}\text{C}$ ), Լոռիում՝  $-5...-10^{\circ}\text{C}$ , Կոտայքի լեռներում՝  $-4...-7^{\circ}\text{C}$ , նախալեռներում՝  $-2^{\circ}\text{C}$ , Սյունիքում՝ հովիտներում՝  $+2^{\circ}\text{C}$ , նախալեռներում՝  $-3...-7^{\circ}\text{C}$ , Տավուշում՝  $-3...-6^{\circ}\text{C}$ , Արմավիրում՝  $-4^{\circ}\text{C}$ , Արարատում՝  $-2...-3^{\circ}\text{C}$ , Երևանում՝  $-2...-5^{\circ}\text{C}$ :

Մարտի 28-ին առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում՝ 16-23մ/վրկ արագությամբ:

Ապրիլի 4-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունը Արագած բ/լ-ում կազմում է՝ 176սմ, Ամբերդում և Վարդենյաց լ-ք-ում՝ 53սմ, Ջերմուկում՝ 46սմ, Ապարան լճային՝ 42սմ, Հրազդանում՝ 34սմ, Ամասիայում՝ 24սմ, Ամապարանում՝ 19սմ, Սեմյոնովկայում՝ 13սմ, Աշոցքում՝ 8սմ, Սևանում՝ 1սմ: Արարատյան դաշտում, Արագածոտնի և Վայոց ձորի նախալեռներում, Լոռիում, Տավուշում, Սյունիքում ձյան ծածկը բացակայում է:

Շաբաթվա ընթացքում լեռնային շրջաններում աշնանացանները գտնվել են ձմեռային հանգստի շրջանում: Հովտային շրջաններում եղանակային պայմանները նպաստավոր են եղել մշակաբույսերի աճի, զարգացման և դաշտային աշխատանքները իրականացնելու համար:

Շիրանենու մասսայական ծաղկումն Արարատյան դաշտում դիտվել է կանխատեսված ժամանակահատվածում, իսկ դեղձենու բողբոջները ուռչել են, տեղ-տեղ թույլ բացվել: